ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,
հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՀՈՒԼԻՍԻ 2021թվականի N 90-Ա

ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԱԼՎԱՐԴ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի ,,Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին,, № 912-Ն որոշման պահանջները և հաշվի առնելով, որ Ալվարդ Սահակյանի կողմից ընդունվել է ուղղակի վաճառքով գնելու առաջարկը՝ **Մասիս քաղաքային համայնքի ավագանին որոշում է.**

1.Թույլատրել մեկ տարվա ընթացքում Մասիս քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող ՀՀ Արարատի մարզ Մասիս քաղաք Մասիս կայարան Աղասի Ասատրյան փողոց թիվ 35/1 հասցեում գտնվող բնակելի տունը /մակերես՝ 224,7 քմ/ և սպասարկման ու պահպանման համար օգտագործվող 0,03936 հա բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /ծածկագիր՝ 03-003-0434-0014/ ուղղակի վաճառքով օտարել Ալվարդ Սահակյանին:

2.Բնակելի տան համար մուծման վճարը կազմում է 814987 /ութ հարյուր տասնչորս հազար ինը հարյուր ութանասունյոթ/ ՀՀ դրամ 1քմ-ի արժեքը 3627 /երեք հազար վեց հարյուր քսանյոթ/ ՀՀ դրամ:

3.Հողամասի ուղղակի վաճառքի գինը կազմում է 480586 /չորս հարյուր ութանասուն հազար հինգ հարյուր ութանասունվեց/ ՀՀ դրամ 1 քմ-ի արժեքը 1221 /մեկ հազար հազար երկու հարյուր քսանմեկ/ ՀՀ դրամ:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲԳԱՐՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ

ՌԱՖԱՅԵԼՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՍԱՎԱԴՅԱՆ ԳԱՐԻԿ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԷԴՄՈՆԴ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ

Համայնքի ղեկավար՝ **ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ**